ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
«ԵՂՎԱՐԴԻ N 3 ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ» ՊՈԱԿ

ք.Եղվարդ, Երևանյան 7/2

էլ.փոստ yeghvard3@schools.am
հեռ. (0224 -2-15-95) (099-464-880)

,,15,, 07դեկտեմբերի 2023թ

«Հայկազունք» ՍՊԸ -ի
տնօրեն Կ.Մացակյանին

Ծանուցում

Պայմանագիրը մասնակիորեն միակողմանի լուծելու մասին

Հայտնում ենք, որ «ԵՂՎԱՐԴԻ N3 ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ» ՊՈԱԿ-ի (այսուհետ՝ Գնորդ) և «Հայկազունք» ՍՊԸ -ի (այսուհետ՝ Վաճառող) հետ «21» «Օգոստոսի» 2023թ.-ին կնքված թիվ ՀՀԿՈՏ-ԵՂՎԱՐԴ-ՀՅՀԴ-ԳՀԱՊՁԲ-23/15-2 պետական գնման պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) համաձայն Վաճառողը ստանձնել է պարտավորություն մատակարարել Պայմանագրի Հավելված 1-ով նշված ապրանքները: Սակայն 24.11.2023 թվականից՝ խախտելով մատակարարման ժամկետները և պայմանագրով սահմանված դրույթները, չի պատասխանում հեռախոսազանգերին և չի մատակարարում Պայմանագրով նախատեսված ապրանքները:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ Պայմանագիր կնքած անձի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու հիմքով (Պայմանագրի 2.4.1, 2.4.2, 2.4.5, 2.4.9 կետեր) «ԵՂՎԱՐԴԻ N3 ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ» ՊՈԱԿ-ը հարկադրված է Պայմանագիրը 07.12.2023 թվականից միակողմանիորեն և մասնակիորեն լուծել:

Միաժամանակ հայտնում ենք, որ Վաճառողին տրվում է 10 աշխատանքային օր ժամկետ՝ որակավորման և պայմանագրի ապահովումները՝ համապատասխանաբար 12 210 (տասներկու հազար երկու հարյուր տաս) ՀՀ դրամի և 8 140 (ութ հազար հարյուր քառասուն) ՀՀ դրամի չափով վճարելու համար: Փոխանցումը պետք է կատարել Գնորդի՝ ՀՀ Ֆինանսների անվամբ բացված 900118000026 գանձապետական հաշվին:

Սահմանված ժամկետում վճարումը չկատարելու դեպքում, «ԵՂՎԱՐԴԻ N3 ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ» ՊՈԱԿ-ը պարտավորվում է որոշում կայացնել՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի ա ենթակետի համաձայն «Հայկազունք» ՍՊԸ –ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու գործընթաց:

<< ԵՂՎԱՐԴԻ N3 ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ>>

ՊՈԱԿ- տնօրեն՝

Լ.Աղայան